Մշակութային նախագիծ. Հին Գորիս քարանձավային Գորիսի քարանձվային բոհեմ

Նախաբան

Հին Գորիսի քարանձավային համալիրի հանրահռչակումը կարող է դառնալ Հայաստանի ժայռափոր ճարտարապետության այցեքարտերից մեկը՝ ներկայացնելով մեր պատմամշակութային ժառանգության յուրահատուկ դրսևորումը: Բոհեմային մթնոլորտի ստեղծումը և մշակութային միջոցառումների կազմակերպումը կապահովեն տարածքի կենդանի շունչը՝ միաժամանակ պահպանելով դրա պատմական արժեքը:

Քարանձավի կանոնավոր օգտագործումը կնպաստի նաև դրա բնական պահպանությանը: Մշտական հսկողությունը, օդափոխությունը և պարբերական խնամքը կօգնեն կանխել խոնավության կուտակումը և ավազի հոսունության հետևանքները: Այսպիսով, մշակութային գործունեությունը կդառնա պահպանության լավագույն երաշխիքը:

ՔԱՐԱՆՁԱՎԸ՝ ՄՏԱՎՈՐ ԵՎ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ

Քարանձավում կարող են կազմակերպվել գրական երեկոներ, փոքր համերգներ, արվեստի ցուցահանդեսներ և թեմատիկ քննարկումներ, ցուցադրություններ:

Տեղական կոլորիտը, ավանդական կահավորումը, մշակութային ծրագրերը կստեղծեն յուրահատուկ փորձառություն: Հատկապես կարևոր է երիտասարդության ներգրավումը: Քարանձավային բոհեմը կարող է դառնալ այն վայրը, որտեղ երիտասարդները կծանոթանան տեղի մտավորականների հետ, կսովորեն նրանցից և կզարգացնեն սեփական նախաձեռնությունները: Սա կնպաստի սերունդների միջև կապի ամրապնդմանը և մշակութային ավանդույթների փոխանցմանը:

Այսպիսով, քարանձավը կվերածվի կենդանի մշակութային օջախի, որտեղ կհամադրվեն անցյալն ու ներկան, ավանդականն ու ժամանակակիցը:

Կարևոր է նաև տարածաշրջանային խոտաբույսերի ցուցասրահի ստեղծումը: Սյունիքի լեռնաշխարհը հարուստ է եզակի բուսատեսակներով, որոնք դարեր շարունակ օգտագործվել են ժողովրդական բժշկության մեջ: Մատենադարանի հետ համագործակցությունը հնարավորություն կտա ներկայացնել միջնադարյան բժշկական ձեռագրերի վկայությունները այս բույսերի մասին, ցույց տալ դրանց պատմական նշանակությունը և ժամանակակից կիրառությունը:

Ցուցասրահում կներկայացվեն նաև տեղացի արհեստագործների ձեռքի աշխատանքները՝ գործվածքներ, կավագործություն, փայտի

փորագրություններ: Սա ոչ միայն կպահպանի ավանդական արհեստները, այլև կստեղծի եկամտի նոր աղբյուր տեղի վարպետների համար:

Մշակութային ծրագրերը՝ գրական երեկոները, փոքր համերգները, ինտելեկտուալ խաղերը, կդառնան քաղաքի մշակութային կյանքի կարևոր բաղադրիչ: Հատկապես կարևոր է ինտելեկտուալ խաղերի բաղադրիչը, որը կգրավի երիտասարդությանը և կստեղծի մտավոր մրցակցության առողջ մթնոլորտ:

Այս ամենը միասին կստեղծի բացառիկ մշակութային բոհեմային տարածք, որը կծառայի և՛ տեղական հանրությանը, և՛ կգրավի զբոսաշրջիկների:

Ակնկալվող արդյունքներ

Նախագծի իրականացումը կունենա բազմաբնույթ դրական ազդեցություն: Մշակութային առումով, քարանձավային բոհեմը կդառնա Գորիսի մտավոր կյանքի նոր կենտրոն: Այստեղ կկազմակերպվեն գրական-երաժշտական երեկոներ, արվեստի ցուցահանդեսներ, գիտական քննարկումներ: Սա կնպաստի տեղական մտավոր ներուժի իրացմանը և նոր ստեղծագործական նախաձեռնությունների ծնունդին:

Սոցիալական ազդեցությունը կարտահայտվի համայնքային կյանքի ակտիվացման մեջ: